ՇՈՒՇԱՆՆԱ ԳԵՂԱՄԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ
Shushanna.grigoryan.95@mail.ru
DOI: 10.54503/978-5-8080-1568-5-259

ԳՈՅԻ ԵՎ ՉԳՈՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ԽՈՐՔԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ» ԳՐՔՈՒՄ

Բանալի բառեր՝ *Աղասի Այվազյան, խորություն, պարատեքստային լուծումներ, հակադրությունների հնարք, ճամփաբաժան, նկարներ, կապեր, կղաժ:*

Ներածություն

Գրող, նկարիչ, կինոռեժիսոր, դրամատուրգ Աղասի Այվազյանը հայ նորագույն շրջանի գրականության ու արվեստի նշանակալի դեմքերից մեկն է: Թվում է՝ նրա գրականությունը և գեղանկարչությունը «եսակենտրոն» են, մի փոքր բարդ՝ ընկալման համար, բայց այվազյանական ինքնօրինակ եսի գեղարվեստական արտացոլումները ազգային բնավորության ու ճակատագրի, մարդու և մարդկայինի առնչությամբ կարևոր բացահայտումների և ընդհանացումների հնարավորություն են տալիս:

Աղասի Այվազյանի՝ հետմահու լույս տեսած «Խորքի խորությունը»[1] գրքում ներառված ստեղծագործությունները գրվել են հեղինակի կյանքի վերջին տարիներին: Դրանք նրա աշխարհայեցողության ու գեղարվեստական մտածողության խտացումներն են: Ժողովածուն առանձնահատուկ է նրանով, որ այն-

[1] **Այվազյան Ա.,** *Խորքի խորությունը,* Երևան, 2010, էջ 60:

տեղ ներկայացված են հեղինակի գեղանկարչական աշխատանքները ևս: Դրանք, փոխկանչի մեջ մտնելով գեղարվեստական երկերի հետ, լրացնում, ամբողջացնում ու պարզաբանում են դրանք՝ արտապատկերելով հեղինակի գաղափարագեղագիտական ընկալումների՝ միջգիտակարգային ուսումնասիրության հնարավորություն տվող միասնական նկարագիրը:

Ասվածի վկայությունն են նաև գրքի վերնագիրը և դիմերեսի նկարը: Գրքի վրա Այվազյանի ինքնադիմանկարն է, որտեղ հեղինակը ձեռքով ծածկել է դեմքը և կարծես հայելային կերպով երևում է մի քանի դեմքերով: Այդպես հեղինակը գեղանկարչության լեզվով պատկերում է մարդու եսի տարբեր շերտերը: Դա ուղղված է մարդու էության խորքային բացահայտմանը, խորքի խորության վերհանմանը: «Գրականությունը,- գրում է Այվազյանը,- սկսվում է խղճի ձայնից: Ասածս պարզունակ բարոյականություն չէ: Խոսքս մարդու էության մասին է: Գրողն իր ներսում պայքարում է իր կոմպրոմիսների դեմ: Դա գերմարդկային ճիգ է, մարդ ապրելու միակ ելքը»:

Այդ շերտազննումն անսպառ է, անընդհատ երևում է Այվազյանի գործերում, իսկ հեղինակի գեղարվեստական հայացքի ընդգրկման տարածությունը մարդու հոգու և մարմնի լաբիրինթոսն է: Մ. Սարյանի՝ այլ առիթով արված դիտարկումը համադրելի է այս դեպքին և կարծես ուղղված է նաև այվազյանական գեղարվեստական լուծումների մեկնաբանությանը. «... Ստեղծագործման պրոցեսում է, որ թե՛ արվեստագետի, թե՛ գիտնականի մոտ միասնաբար և ծայրահեղ ուժգնությամբ լարվում են մարդու ինտելեկտուալ աշխարհի բոլոր կողմերը, և այստեղ կատարվում է բևեռացման մի պահ, որ նրան բացարձակ էությամբ տանում է դեպի ստեղծագործումը: Այնուհետև, երբ մարդը մտնում է սովորական կյանքի հունի մեջ, այդ կենտ-

ռոնացումը նույնիսկ իրեն թվում է հրաշքային և անբացատրելի»[2]:

Խորքի խորության ըմբռնմանը նպաստում են ոչ միայն հեղինակի հայացքի բազմաշերտությունը, այլև պարատեքստային[3] ուշագրավ լուծումները:

Գրքի նկարագիրն ամբողջանում է վերնագիր-տեքստ, անուններ-հերոսներ, միջտեքստային կապեր, նկարներ-տեքստեր առնչությունների համակցման շնորհիվ:

Այվազյանական խորաքնին հայացքի և միջտեքստային կապերի բնորոշ օրինակ է «Ժորա Կարկատանովի մարմինը և հոգին» վիպակը: Գրքում զետեղված միակ վիպակը ոչ միայն ամբողջացնում է ժողովածուն, այլև ներկայացնում Այվազյանի ապրած ժամանակի, առհասարակ՝ պատմամշակութային կյանքի դիմագիծը:

Նա վերնագրում անվանական առանձնացնում է մարդուն և ցույց տալիս, որ մարմինն ու հոգին երբեմն կարող են պարզապես, «առանց առիթի» գոյություն ունենալ: Հեղինակը անուղղակի ուղղորդում է ընթերցողին՝ համապատասխանաբար ընկալելու ասվածը: Նա նշում է, որ «Ժորա Կարկատանովը ամբողջ մի դարաշրջան է... Ժորան մեր ենթագիտակցությունն է, մեր լինելության ատաղձը, մեր գոյության արնոտ ու անհրապույր մսանյութը...»[4]: Արդյունքում հեղինակն առաջ է քաշում մարդկային մարմնի ըմբռնման նոր տարբերակ, որը տեսնվում է վիպակի հենց սկզբում, կամ, ինչպես հեղինակն է վերնագրել, «Նախասացության» մեջ է: Եվ այս միտքը շարունակ ուղեկցում է ընթերցողին: Տեքստի վերջում հնչում է Կարկատանովին

---

[2] **Մաթևոսյան Վ.,** *Մարտիրոս Սարյանի էսթետիկական հայացքները,* Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 1980, էջ 60:

[3] **Գրականության տեսության արդի խնդիրներ**, *Ուսումնական ձեռնարկ,* Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 143:

[4] **Այվազյան Ա.,** *Խորքի խորությունը,* Երևան, 2010, էջ 60:

ուղղված անվանականչ. կանչողը նրան ծանոթ-անծանոթ է, որին փնտրում է Կարկատանովը, սակայն չի գտնում և, նույնանալով ամբոխի հետ, ինքն էլ է անհետանում:

Կարկատանովը դառնում է այդ ամբոխի մի մասնիկը: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ Կարկատանովը մարդու մի մասն է, որ ուղեկցում է նրան շարունակ, և թեկուզև սկզբում հեղինակն ասում է, որ Ժորան դարաշրջան է, բայց միևնույն ժամանակ նա անհետանում է՝ չմահանալով, բայց չշարունակելով պատմությունը, ինչը նշանակում է, որ նա գոյություն ունի, պատրաստ է վերադառնալ, երբ իրեն կանչեն ու հիշեն:

Հետաքրքիր է նաև, որ վիպակը բաղկացած է 21 փոքրիկ պատմություններից, որոնք Կարկատանովի կյանքի 21 դրվագներն են և գուցե ակնարկում են, որ վիպակը գրված է 21-րդ դարում: Սա նաև կերպարի կենսունակության մասին կարող է վկայել: Թեպետ հեղինակը խոսում է Խորհրդային Հայաստանի և 20-րդ դարի մասին, բայց 2006–2007 թվականներին գեղարվեստորեն հայտնակերպված լինելով՝ այս կերպարը դեռ կենսունակ է և շարունակում է իր ճամփորդությունը:

Պարատեքստային լուծման տարբերակ է նաև երկերի միջև կապը, որն արտահայտվում է կրկնվող ձևակերպումներով: «Ծուղակը» երկում գրված «...Իմ սկզբի մահը» նախադասությունը, որն անուղղակիորեն հիշեցնում է ընթերցողին, որ պատմվածքներում մանկությունն ու մահը՝ սկիզբը և վերջը, շարունակ զուգահեռվում են: Այս միտքը կրկնվում է: Որոշ դեպքերում դա արտահայտվում է նրա մանկությունից մարդկանց «վերադարձով». «Այցելություն»-ում Պարգև Եսայանն է որպես մանկության հուշ հայտնվում և հեղինակին հիշեցնում մարդու ծնունդն ու մահը, «Անառիկ ամրոց»-ում Նապոլեոնի կյանքն ու մահն է, իսկ սկզբում նշված «Դեռևս մանկության օրերին...»[5]

[5] Նույն տեղում, էջ 6:

արտահայտությունը ցույց է տալիս մարդու սկիզբը: Անգամ մարմնավաճառի պատմությունը փոքրիկ նովելում, երբ Խոսրովը գալիս է Ռոստովից Հայաստան, բոլոր մտքերի խորքից պատկերագծվում է երեխայի ծնունդի փոքրիկ դրվագը: Տղան ծնվում է, իսկ հայրն՝ անհետանում կամ այլ կերպ ասած՝ մահանում, ավարտվում է:

Վերնագրային լուծումների առումով ուշագրավ է «Ռոմանտիկա» էսսեն, որի խորագիրը ցույց է տալիս, որ երկը լավատեսական է, իսկ ենթավերնագրային երեք բաժանումները փոխկապակցված են՝ «Հավերժագնաց», «Սիրո բեռը», «Ընդերքը»: Պատմության առաջին մասում կյանքն է, որի իմաստը բացահայտվում է երկրորդ հատվածում և ամբողջանում արդեն երրորդ մասում, երբ երևում է երևույթների իրական տեսքը՝ խորքը: Մարդն անցնում է իր ճանապարհը, ճանաչում է կյանքը և վերադառնում նույն՝ զրոյական կետին: Արդյունքում ծերունկն ու մանչունկն էլի իրար հետ են քայլում: Կրկին շեշտադրվում է ժողովածուի կարևորագույն, կոնցեպտուալ մտքերից մեկը՝ կյանքն ու մահը նույնական են, նրանք քայլում են իրար հետ կամ կողք կողքի:

Իսկ որպես շարունակություն՝ «Օրհասը» էսսեում կյանքը շարունակվում է, մարդիկ, նրանց կյանքը տարբեր են, բայց նույնական, միայն մի կողմից են երևում, որովհետև կա վարագույրը, որի հետևում թաքնվածը, անտեսանելին ճշմարիտ, իրական կյանքն է:

Այդ անտեսանելի վարագույրը կարծես բաժանում է գոյություն ունեցողը գոյություն չունեցողից:

Այս հատվածը հիշեցնում է Ծերուկի կերպարը, որը տարիների հետ տեսնում ու հասկանում է ավելին, առավել անտեսանելին, և դրանով էլ ավելի է սիրում կյանքն ու գնահատում սերը՝ հասկանալով դրանց խորությունը: Այս ընկալումը առանց-

քային է Այվազյանի ժողովածուի համար: Գոյության և չգոյության պատկերավորման գեղարվեստական օրինակներ են ոչ միայն Կարկատանովի կերպարը, որը շարունակ հայտնվում և անհետանում է իր «տեսակներով», այլև «Մարմնավաճառի պատմությունը» երկում Խոսրովի հայր դառնալու պատմությունը, «Կամակոր աղջիկը» էսսեում երեխայի կարևորության շեշտադրումը: Վերջինը, ժառանգորդության խնդիրն ըստ հեղինակի, մարդկային գոյության կարևորագույն պայմանն է:

Այվազյանական գեղարվեստին բնորոշ է հակադրությունների հնարքը, որով նա շեշտում է իր մտքերը՝ միևնույն ժամանակ չպարտադրելով սեփական կարծիքը և թույլ տալով ընթերցողին գնահատական տալ երկին, հերոսին, նկարագրվող երևույթին: Այդպիսի օրինակ է հենց «Այցելություն» նովելի հերոս Պարգև Եսայանի կերպարն ու նրա բնութագիրը մինչ «մանկության ընկերոջ» բնակարան հասնելը: Հերոսը չգիտի, թե ինչի համար է գնում, և ինչ է իրեն այնտեղ սպասում՝ ցոփ ու շվայտ կյա՞նք, թե այնպիսի տխուր իրականություն, ինչպիսին շենքի շքամուտքից ստացած տպավորությունն է: Անգամ հերոսի անունն այստեղ կարելի է համարել հակադրության օրինակ. ի վերջո Պարգև-ը պիտի լինի նվեր միջավայրի համար, իսկ իրականում նա ես-ա-յան է՝ սեփական եսի կարևորությամբ ապրող մեկը:

Այվազյանի կողմից ճիշտ ընտրված հակադրությունների հնարքը ամենից լավ է ներկայացնում գոյի ու չգոյի գաղափարը: Սա տեսնում ենք և՛ հեղինակի նկարներում, և՛ երկերում, և՛ ֆիլմերում: Եթե վերադառնանք վերոնշյալ էսսեին, ապա ներկայացվում է Պարգև Եսայանի գոյությունը հենց հակադրության հնարքով: Հերոսը կա ու չկա միաժամանակ, քանի որ նրան ոչ մեկը չի հիշում: Ստացվում է, որ մարդը գոյություն ունի, քանի դեռ նրան հիշողներ կան, իսկ Պարգևին իր կենդանության օրոք

անգամ ոչ ոք չէր հիշում, և նրա կանչը հեղինակին զարմացնում է, որովհետև նրա համար էլ Պարգևն ուղղակի գոյություն չուներ:

Հատկանշական է, որ գրքում ընթերցողին շարունակ ուղեկցում է Աստծո կերպարը, որը երևում է նաև նկարներում, և սա էլ է նպատակային: Աստված ներկայացված է որպես գոյարար, ստեղծող, կյանքի սկիզբ ու արարիչ, իսկ դա նշանակում է, որ հաստատելով Աստծո գոյությունը՝ հաստատվում է կյանքը, մարդու սկիզբն ու ներկայությունը: Գերեզմանոցն այս կետում ճամփաբաժան է դառնում, երբ դու չգիտես՝ երկու կողմերում ինչ կա: Միաժամանակ երևում են սկիզբը և վերջը, և այստեղ սկսվում ու ավարտվում է անիրականը, այստեղ հանդիպում են ընկերները, մարդիկ, այստեղ էլ ավարտվում է ստեղծագործությունը: Տարբեր դրվագներում հայտնվող այս ընկալումը շարունակ տանում է նույն կետին ու նույն հարցերին, որ ժամանակ առ ժամանակ հերոսները տալիս են իրենք իրենց:

Գրքում ներառված նկարներից մեկը՝ «Քայլափոխություն Երևանի փողոցներով», երկից առաջ է դրված, և կարելի է ասել, որ հենց սա էլ արտացոլում է պատմվածքի գաղափարը: Այստեղ Գնելը քնում է՝ երազում քայլելով Երևանի փողոցներով, և այդպես՝ ամեն գիշեր: Այդ երազները հաճելի են, ուստի և նա ուզում է քնել, որովհետև երազում վայելում է հայ մեծերի հետ հանդիպումները, ինչը պատկերված է նկարում, իսկ սա էլ գոյության մի տարբերակ է: Բոլոր դեպքերում պարզ է, որ խոսքը մարդու անգոյության մասին է. այս դեպքում մարդն ապրում է միայն երազում: Նկարում տեսնում ենք, որ հերոսը դեմք չունի, նա չունի գոյություն, բայց կան մեծերը: Սա կարող է նաև գրողի վախերի արգասիքը լինել. կդասվի՞ արդյոք ինքը այս մեծերի շարքը, կկարողանա՞ արդյոք անցնել դիմացի հատվածը, թե՞ կտեսնեն միայն իր մեջքը, և ինքը կմնա չհասկացված: Մեծերի

գոյությունն ապահովվում է մեր հիշողությամբ. Այվազյանն այսպիսով խաղարկում է գոյություն և չգոյություն եզրերի հարաբերական ըմբռնումը: Իրականում երբեմն մեռյալներն ավելի ողջ են, քան ողջերը: 2017 թվականի իր հարցազրույցում գրողի այրին՝ Գրետա Վերդիյանը, ցավով խոսում է այն մասին, որ կարծես իրականացել է Այվազյանի ամենամեծ մտավախությունը, և տվյալ պահին նրան արդեն ոչ ոք չի հիշում:

Ավարտվում է գիրքը կրկին նկարով, որը պատկերում է մերկ մարմին՝ գերեզմանոցում: Թվում է՝ հեղինակը նորից ու նորից է վերադառնում նույն թեմային, հատկապես որ անմիջապես նկարից առաջ «Անգոյություն» կոչվող վերջին պատմվածքն է: Այստեղ հեղինակը ներկայացնում է մարդու բազմաշերտ եսի մերկացման ընթացքը[6], որը գնալով ավելի տեսանելի է դառնում կյանքում մարդուն տրված աստիճանական կորուստներով և հատկապես մոր կորստով: Հեղինակը նկարում շեշտադրում է մարդու անցած ճանապարհը, ինչն արտահայտվում է մարդու մեծ ոտքերի պատկերով: Նրա մերկությունը աշխարհի առաջ բաց լինելու և հոգնածության խորհրդանշական իմաստ ունի նաև:

Նկարում շեշտադրվում են ոչ միայն մարդու հոգնատանջ լինելը, այլև նրա՝ Խորհրդային և անկախ Հայաստանների մեջտեղում, անցման ժամանակի մեջ գտնվելը. մի կողմից մուրճն ու մանգաղն են պատկերված, մյուս կողմից գերեզմանից դուրս է եկել խաչելության հետքերը ոտքերին կրող մարդը, որի հայացքն ուղղված է դեպի լույս ճառագող խաչը՝ պատկերավորելով լուսավորի հանդեպ մեծ սպասելիքները:

Վերջին նկարը մի կողմից ամփոփում է գիրքը, մյուս կողմից ակնարկում անավարտն ու շարունակելին. հեղինակի մտո-

---

[6] Այս մասին մանրամասն տե՛ս **Սեյրանյան Լ.,** *Հայեցումներ բառերից անդին*, Երևան, «Արմավ» հրատ., 2021, էջ 172:

րումները կիսատ են, խնդիրները սպասում են իրենց լուծմանը: Նկարները լրացնում են պատմվածքներին՝ երբեմն դառնալով դրանց շրջուն տարբերակները: Գրքում տեղ գտած բոլոր երկերն ուղղված են մարդու հոգուն, գոյին ևս մի քայլ մոտենալուն:

Եզրակացություններ

Իր հարցազրույցներում Այվազյանը անհատին, ընտանիքը հաճախ նույնացնում է հայրենիքի հետ: Նա նշում է, որ մեր հայրենիքը մենք ենք, և դրա համար գոյի գաղափարն ավելի է կարևորվում:

Այվազյանի «հայրական» գրականության մի մասն է գոյի փիլիսոփայությունը, իրավիճակը, երբ մարդն ապրում է ստեղծելով: Ստացվում է՝ կանք, քանի դեռ ստեղծում ենք, արարում, ունենք ընտանիք, հիշվում ենք:

«Խորքի խորությունը» գիրքն այն բանի վկայությունն է, որ հեղինակը կարողացել է համատեղել արվեստի մի քանի տեսակներ՝ իր ասելիքին այդպիսով բազմաշերտություն և խորություն հաղորդելով, երևույթի ընկալման դիտակետերը, պատկերման դիտանկյունները փոխելով. դրանք ծառայում են գաղափարի հնարավորինս համակողմանի, ամբողջական ընկալմանը:

Գիրքը գոյության և անգոյության, Արարչի և մարդու հարաբերությունների, մարմնի և հոգու ամբողջության մասին է:

Այդպես Կարկատանովը ժամանակակից մարդն է, որն ամբողջացնում, համադրում է մարդկային բնույթի մի քանի տեսակներ՝ հավաքելով կյանքի մի մեծ կոլաժ: Այդ նպատակին են ծառայում նաև նկարները՝ որպես բողոք, ճիչ, որոնցով հեղինակն ուզում է լսելի լինել, այդ դրվագներով ի մի բերել, ամբողջացնել գոյի իր ընկալումը, հաղթել չգոյությանը:

Այվազյանի հերոսները մարդիկ են, որոնք պատրաստ են թեկուզ մի պահ բացել խաղաթղթերը, վայր դնել դիմակներն ու պատմել իրենց մասին: Եվ վստահաբար կարելի է շեշտել, որ

նկարների ու գրականության կապը նաև դրանում է. ի վերջո հեղինակն իր նկարների հերոսներին է պատկերում երկերում, նրանց տալիս հատուկ անուններ և գործառույթներ: Ուստի այվազյանական արվեստի տեսակները պիտի դիտարկել համադրաբար՝ կարևորելով նաև կրկնությունները:

Հեղինակի գեղարվեստական աշխարհում խճանկարի բեկորներով շարունակ հավաքվում են «ես»-երը, հայրենիքի և աշխարհի մասին մտորումները, ազգային հավաքականության գաղափարը, շնչող ու ապրող քաղաքի կոլորիտային անձնավորումը՝ որպես մարմին ստանալու, նյութականանալու, գոյելու և տևելու տարբերակներ:

ШУШАННА ГРИГОРЯН

Соискательница кафедры современной армянской литературы в Институте литературы имени М. Абегяна НАН РА

ГЛАВНАЯ ПРОБЛЕМА СУЩЕСТВОВАНИЯ И НЕСУЩЕСТВИЯ В КНИГЕ АГАСИ АЙВАЗЯНА «ГЛУБИНА ГЛУБИНЫ»

Резюме

Агаси Айвазян – один из представителей армянской литературы, творивший во многих областях искусства. Его действительно считают представителем 20-го и 21-го веков, и это тоже его отличительная сторона, но, к сожалению, автор недостаточно изучен армянскими литературоведами, что делает любую статью о нем более ценной.

В данной статье рассказывается о книге Агаси Айвазяна «Глубина глубины», вышедшей после его смерти. В нем представлены его мысли, страхи и чувства последних лет. Она представляет

собой уникальное изложение жизни и творчества автора. Автор, стоящий на грани смерти, пытается понять жизнь, свой пройденный путь. И интересно, что в этом разграничении мы видим у автора упорядоченную путаницу. Есть мотивы патриотизма, истории, семьи, любви, успехов и неудач, грехов и покаяния.

Перед рассказами представлены фотографии автора. которые завершают раздел литературы.

Статья написана в форме анализа, в котором представлены персонажи, их мысли, направленные на выявление собственных мыслей автора.

Учитывая, что книга вышла уже после смерти автора, можно с уверенностью сказать, что все грани его мысли сохранились и это стало еще одним примером идеи Эйзенштейна о том, что искусства действуют только вместе.

И подводя итог статье, можно сказать, что это книга не только для литературоведа, но и для публики. Ионазаставитзадуматься, понятьиоценитьжизнь.

***Ключевые слова**: Агаси Айвазян, глубина, паратекстовые решения, прием контрастов, перекрестки, картинки, связи, коллаж.*

SHUSHANNA GRIGORYAN
Post-graduate student at the Institute of Literature after M. Abegian of the NAS of the RA

THE MAIN PROBLEM OF EXISTENCE AND NON-EXISTENCE IN AGASI AYVAZYAN'S BOOK "THE DEPTH OF DEPTH"

Abstract

Agasi Ayvazyan is one of the representatives of Armenian literature, who worked in many fields of art. He is indeed considered a representative of the 20th and 21st centuries, and this is also his distinctive side, but, unfortunately, the author has not been sufficiently studied by Armenian literary scholars, which makes any article about him more valuable.

This article talks about Agasi Ayvazyan's book "The Depth of Depth," which was published after his death. It presents his thoughts, fears and feelings of recent years. It represents a unique account of the author's life and work. The author, standing on the verge of death, is trying to understand life, his past path. It is interesting that in this distinction we see orderly confusion in the author. There are motives of patriotism, history, family, love, successes and failures, sins and repentance.

The stories are preceded by photographs of the authorwhich complete the literature section.

The article is written in the form of an analysis, which presents the characters and their thoughts, aimed at identifying the author's own thoughts.

Considering that the book was published after the author's death, it is safe to say that all facets of his thought were preserved and

this became another example of Eisenstein's idea that the arts work only together.

And to sum up the article, we can say that this is a book not only for literary scholars, but also for the public. And it will make you think, understand and appreciate life.

Keywords*: Agasi Ayvazyan, depth, paratextual solutions, contrasts, intersections, pictures, connections, collage.*